AREVIK SANAMYAN
Actuarial and financial mathematics,
Bachelor's degree, 2nd year

ANALYSIS OF PRODUCTIVITY IMPROVEMENT ISSUES IN THE REPUBLIC OF ARMENIA

Keywords: *Economic growth, labor productivity, employment rate, productivity convergence*

Unlike countries that are rich in natural resources to ensure the desired level of well-being, Armenia should rely on economic competitiveness that can be achieved by promoting an increase in productivity.

This article analyzes the level of labor productivity of the Armenian economy and its dynamics in the context of identifying problems of increasing productivity using statistical tools.

In general, the findings prove that the RA economy has recorded an increase in the rate of productivity. However, high rates of labor productivity growth require a higher economic growth for solving the problems of unemployment, job creation, gradually increasing polarization and poverty that still exist in RA.

ՆԱԻՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Կառավարում, բակալավրիատ,
3-րդ կուրս

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2009 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *ճգնաժամ, տնտեսական աճ, ՀՆԱ, տնտեսության ճյուղեր*

Յուրաքանչյուր երկրի տնտեսության անբաժանելի մաս են կազմում տնտեսական ճգնաժամերը, որոնց ազդեցության չափը գերազանցապես կախված է ճգնաժամը կրող երկրի զարգացման մակարդակից և ճգնաժամի փոխանցման ուղիներից[1]: Հայաստանի Հանրապետությունը նույնպես ունեցել է տնտեսական ճգնաժամեր, որոնք առանձնանում են իրենց բնույթով ու խորությամբ: Որպես այդպիսին, ստորև կներկայացվի 2009 և 2020 թվականների տնտեսական ճգնաժամերի համեմատական վերլուծությունը:

Ներածություն: Համաշխարհային տնտեսության զարգացման ներկա ժամանակաշրջանում, տնտեսական աճն ապահովող հնարավորություններին զուգահեռ, զարգանում են նաև այդ աճը խոչընդոտող հավանական և անկանխատեսելի ռիսկերը[2], որոնք գիտական ու մասնագիտական գրականության մեջ ստացել են «ճգնաժամ» անվանումը:

---

[1] Տե՛ս Դեպի ՀՀ ՀՖՃ փոխանցման ուղիները, հավելված 1:

[2] Տե՛ս Forecasting Economic Crises An Empirical Approach https://www.econ.uni-muench en.de/download/lehre-at-lmu/forecasting.pdf

Ֆինանսական ճգնաժամն ի հայտ եկավ, երբ Միացյալ Նահանգների տնտեսության մեջ առաջին անգամ նկատվեց ներդրումների զուտ ներհոսք՝ արձանագրելով դոլարային էքսպանսիայի ավարտը, որն ուղեկցվեց նաև անվճարունակ տնային տնտեսությունների հիփոթեքային մասսայական վարկավորմամբ: Գործընթացը, իհարկե, իր ազդեցությունն ունեցավ՝ տարածվելով մի շարք այլ երկրների վրա, այդ թվում՝ Հայաստանի, սակայն համաձայն պաշտոնական աղբյուրների՝ ճգնաժամի առաջին ալիքից ելքը դրական էր՝ պայմանավորված ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող արդյունավետ ֆինանսական վերահսկողությամբ, ինչն առկա էր նաև 2020 թ. ճգնաժամի ժամանակ: Իրավիճակը հնարավորություն տվեց բացահայտելու տնտեսության առջև ծառացած և մինչ այդ չբացահայտված մի շարք խնդիրներ, որոնց հետևանքով 2009 թ. ՀՀ-ում ՀՆԱ-ն կրճատվեց շուրջ 14.1%-ով: Անցում կատարելով ՀՀ վերջին (այս պահին)՝ COVID-19 համավարակով պայմանավորված ճգնաժամին՝ հարկ ենք համարում նշել, որ թեև հարվածի ուղղությունը տարբերվեց նախորդից (ունենալով առավելապես առողջապահական ուղղություն), այնուամենայնիվ, ուժգնությամբ չզիջեց 2009 թ. անկմանը: Վերոնշյալ առողջապահական ճգնաժամը, ունենալով համաշխարհային բնույթ, երկրների կառավարություններին ստիպեց մտցնել մի շարք սահմանափակումներ[1] (ուղղված տնտեսության մյուս սուբյեկտներին), որոնց հետևանքները մեղմելու նպատակով իրականացվեցին նաև միանվագ աջակցության ծրագրեր՝ տուժած ոլորտների համար: 2020 թվականն ուղեկցվեց նաև այլ մարտահրավերներով՝ Արցախյան երկրորդ պատերազմ, ներքաղաքական լարվածություններ: Վերոնշյալ իրադարձությունների հետևանքով ՀՆԱ-ն կրճատվեց 7.4%-ով: 2009-ի համեմատ, ՀՆԱ-ի արդյունքն առաջին հայացքից դրական է, սակայն ստորև ներկայացվածից պարզ կդառնա, որ դա հետևանք է տնտեսության աճն ապահովող ճյուղերի մասնակցության աստիճանի:

Ճգնաժամի ելքը դեռևս հստակ չէ՝ վարակման նոր ալիքների արձանագրման պատճառով[2]:

Գրականության ակնարկ: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը (ՀՖՃ) դրսևորվում է ֆինանսական ակտիվների կտրուկ վատթարացմամբ, իրացվելի միջոցների նվազմամբ և վստահության իսպառ բացակայությամբ:

Տնտեսագետները 2009 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամը բացատրել են տարբեր շուկայական ձախողումներով, ինչպես նաև նախաճգնաժամային ժամանակահատվածում էժան վարկերի մակրոտնտեսական միջավայրով: Մասնավորապես, ԱՄՆ-ի Դաշնային պահուստային համակարգը հիփոթեքային վարկավորման տոկոսադրույքներն իջեցրեց մինչև գրանցված ամենացածր մակարդակը՝ դրանով խրախուսելով անշարժ գույքի ձեռք-

[1] Տե՛ս COVID-19 համավարակին կառավարությունների արձագանքման խստության ինդեքսները՝ մշակված Օքսֆորդի համալսարանի հետազոտողների կողմից, https://www. bsg.ox.ac.uk/research/research-projects/ covid-19-government-response-tracker

[2] Համաձայն IMF կանխատեսումների՝ 2022 թվականը զարգացող շուկաների և ցածր եկամուտ ունեցող երկրների համար ևս մեկ դժվարին տարվա բոլոր սպառնալիքներն ունի: COVID-ի նոր տարբերակները, որոնք բախվում են պատվաստումների ցածր տոկոսադրույքներին, ֆինանսական շուկաների խստացմանը և պարտքի բեռի աճին, բոլորն էլ սպառնում են առանց այն էլ փխրուն վերականգնմանը:

բերումը. գործընթացը հանգեցրեց հիփոթեքային պարտքի կտրուկ ընդլայնմանը: Վճարումների ցածր տոկոսի հետևանքով համակարգը ձախողվեց[1]:

Գոյություն ունեցող տեսակետների համաձայն՝ ՀՖՃ-ն դիտարկվում է որպես վճարունակության և իրացվելիության ճգնաժամ, սակայն տարածված ապացույցների հիման վրա այն որակվում է որպես վճարունակության ճգնաժամ[2]:

2009 թվականից ի վեր հաջորդ համաշխարհային անկումը պայմանավորված է COVID-19 ճգնաժամով: Համաձայն համաշխարհային բանկի հրապարակած զեկույցի՝ այս ճգնաժամը ներառում է նախորդի վատագույն բնութագրերը և մինչև այս չգրանցված անկման նոր ուղղությունները: 2020 թ. ճգնաժամը դիտարկվում է որպես «հսկայական մագնիտուդով համաշխարհային ցնցում», որը հանգեցրեց կտրուկ անկումների՝ անորոշության բարձր աստիճանով[3]:

Հետազոտության մեթոդաբանություն: Վերլուծությունն իրականացնելիս օգտվել ենք ՀՀ ՎԿ-ի, ՀՀ ԿԲ-ի, IMF-ի, WB-ի տվյալներից՝ իրականացնելով որակական և քանակական հետազոտություն՝ վերլուծության, համեմատության մեթոդներով:

Գծապատկեր 1. ***Տնտեսական աճի կառուցվածքը (%)***[4]

Գծապատկեր 1-ից ակնհայտ է, որ Հայաստանը մինչև 2007 թվականն ապահովել է տնտեսական աճի բարձր մակարդակ, այնուհետև 2008-2009 թթ. ՀՖՃ ներթափանցմամբ տնտեսական աճը զգալի անկում է արձանագրել, իսկ 2020 թ. համավարակով պայմանավորված՝ ՀՆԱ անկումը կազմել է շուրջ 14.1%:

Համաշխարհային շուկաներում անշարժ գույքի շուկայի անկումը ծնագնդի էֆեկտով տարածվեց ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում՝ հանգեցնելով շուկայի անկմանը, ուղեկցվելով ներդրումների կրճատմամբ, ազդելով վերջին տարիներին տնտեսության հիմնական շարժիչ ուժ հանդիսացող ճյուղի՝ գյուղատնտեսության վրա[5]: Ինչպես արդեն նշեցինք, 2009 թ.

---

[1] https://www.investopedia.com/terms/g/great-recession.asp

[2] https://doi.org/10.1093/rcfs/cfv001

[3] https://documents1.worldbank.org/curated/en/461391599582188306/pdf/Recovery-from-the-Pandemic-Crisis-Balancing-Short-Term-and-Long-Term-Concerns.pdf

[4] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:

[5] Տե՛ս «ՀՀ Կառավարության հակաճգնաժամային միջոցառումների մասին» ամփոփ հաշվետվություն, էջ 2:

ՀՀ-ում ՀՆԱ-ն կրճատվեց 14.1%-ով, որի շուրջ 55%-ը պայմանավորված էր շինարարության կրճատմամբ 41.6%-ով[1], առավել շատ կրճատում արձանագրվեց ծառայությունների ոլորտում՝ 21,8%-ով՝ գրեթե ամբողջությամբ տրանսպորտի ու անշարժ գույքի ոլորտներում: Դրանցից առաջինը պայմանավորված էր արտաքին ապրանքաշրջանառության կրճատմամբ և տնտեսական ակտիվության ընդհանուր անկմամբ, երկրորդը՝ տնային տնտեսությունների ծախսային գերակայությունների փոփոխմամբ՝ հօգուտ սննդամթերքի և հիմնական ծառայությունների և ի վնաս երկարաժամկետ սպառման առարկաների և ներդրումային բարիքների, ներառյալ՝ անշարժ գույքը[2]:

ՀՆԱ-ի կրճատումների պատկերից (2009 թ.՝ 14.1%, 2020 թ.՝ 7.4%) ակնհայտ է, որ 2009 թ. տնտեսական ճգնաժամն առավել խորն է եղել, քան 2020-ինը, սակայն կան ոլորտային անկման ու աճի էական տարբերություններ (աղյուսակ 1):

Հարկ ենք համարում նշել, որ արդյունաբերության ոլորտի արդյունահանող ենթաճյուղը կազմել է համապատասխանաբար 6.3 և 8.4%, իսկ մշակող արդյունաբերությունը՝ -7.1 և -3.6%:

Աղյուսակ 1

Ոլորտային նպաստումները 2009 և 2020 թթ. (նախորդ տարվա նկատմամբ, %)[3]

Ոլորտ	*2009*	*2020*
ՀՆԱ	-14.1	-7.4
Առևտուր	-4.8	-13.2
Արդյունաբերություն	-6.5	-1.5
Ծառայություններ	-2.8	-8.7
Գյուղատնտեսություն	5.9	-4.1
Շինարարություն	-41.6	-6.7

Ըստ էության, երկու դեպքում էլ կրճատումներ են՝ բացառությամբ գյուղատնտեսության ոլորտի, որն աճել է 2009 թ. ճգնաժամի օրոք, բայց նվազել 2020-ին: Ինչպես վերը նշվեց, 2009-ին շինարարության ոլորտը կրճատվեց 41,6%-ով, իսկ 2020-ին պատկերն առավել մեղմ էր՝ կրճատումը 34.9 տոկոսային կետով քիչ[4]: Հատկանշական է պատկերը ծառայությունների ոլորտում՝ 2020-ին անկումն այս ոլորտում շուրջ 5.9 տոկոսային կետով ավելի է եղել, քան 2009-ին: Պատճառը 2019-ին ծառայությունների աճն է 14.6%-ով, սակայն ցուցանիշը դրական չէ, որովհետև կառուցվածքային տեսանկյունից 2019-ի պատկերը որակապես զիջում է 2008-ի պատկերին (աղյուսակ 2): Ծառայությունների ոլորտի «Մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաոլորտում[5], կառուցվածքը դիտարկելիս, գործնականում առնչվում ենք խաղա-

---

[1] Տե՛ս Հայաստանում տնտեսական ճգնաժամերի համեմատական վերլուծությունը, https://www.luys.am/img/artpic/small/03f3e7f1102f1e44d1ad%D5%8F%D5%B6%D5%BF%D5%A5%D5%B%D5%B3%D5%A3%D5%B6%D5%A1%D5%AA%D5%A1%D5%B4.pdf, էջ 5:

[2] Տե՛ս նույն տեղը:

[3] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:

[4] Շինարարության ծավալները 2021 թ.(հունվար-հոկտեմբեր) 6.1%-ով աճել են, որից 306351.4 մլն ՀՀ դրամը կամ 31.4%-ը՝ ի հաշիվ՝ ՊԲ-ի (2020-ի համեմատ 5.45%-ով աճել է), 17.1%-ը՝ միջազգային վարկերի, 3.7%-ը՝ օտարերկրյա ներդրողների (2020-ի նկատմամբ նվազել է 60.2%-ով):

[5] Այս ենթաոլորտի ներքո են նաև մշակութային և սպորտային գործունեությունը՝ ստեղծագործական, արվեստի և հանդիսավոր ներկայացումների, գրադարանների, արխիվների, թանգարանների և այլ մշակութային կազմակերպությունների գործունեությունը:

յին ոլորտին: Պատճառը ենթաոլորտում դրա մեծ տեսակարար կշիռն է[1], ինչն էլ խոցելի է դարձրել ճյուղը: Շահումով խաղերի, վիճակախաղերի, խաղատների և նման այլ գործունեությունները մակրոմակարդակում հանգեցնում են եկամուտների վերաբաշխմանը՝ ցածր եկամուտ ունեցողներից դեպի հարուստներ: Հետևաբար, կարող ենք արձանագրել, որ ոլորտում աճը կդիտարկվի որպես դրական երևույթ, եթե այն ձևավորվի հավելյալ արժեք ստեղծող ծառայությունների միջոցով[2]:

Տնտեսական ճգնաժամի մեկ այլ բնութագրական երևույթ է երկրի արտաքին կապերի խաթարումը՝ արտահանման և ներմուծման գործունեությունը: 2009 թ. դրությամբ արտահանման ծավալների անկումը կազմել էր 10.4%, 2020 թ. 4.2% աճ է գրանցվել արտահանման ոլորտում և 17.2% անկում՝ ներմուծման ոլորտում: 2009-ին ապրանքային արտահանումը կրճատվել էր 34%-ով, իսկ ծառայությունների արտահանումը աճել էր 23%-ով:

Դա բացատրվում է նրանով, որ մի շարք ծառայությունների ծավալները՝ ներառյալ զբոսաշրջությունը, տեղեկատվությունը և կապը, ուղևորափոխադրումները, որոնք կազմում են ծառայությունների արտահանման նկատելի մասը, աճել են: Հատկանշական է, որ 2020-ին ոչ պարենային ապրանքների շրջանառությունը կրճատվել է նկատելիորեն ավելի մեծ ծավալներով, քան պարենային առևտուրը[3], ինչը սովորաբար տեղի է ունենում տնտեսական ճգնաժամի դեպքում, և, իր հերթին, բացասական հակադարձ կապի մեխանիզմով ավելի շատ է կրճատում առևտրի ծավալները:

Աղյուսակ 2

2008 և 2019 թթ. ծառայությունների ոլորտի առավելագույն տատանումներ գրանցած ճյուղերը (տոկոսը ծառայությունների ոլորտում)[4]

Ճյուղ	*2008 թվական*	*2019 թվական*
Մշակույթ, զվարճություններ, հանգիստ	2.3	13.1
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	9.0	18.5
Կրթություն	11.3	5.9
Տեղեկատվություն և կապ	15.	7.9

Եզրակացություն: *Ճգնաժամ* երևույթի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այն, բացասական ներգործությունից զատ, տնտեսական պարբերաշրջանների անբաժանելի մաս է կազմում՝ հաճախ զարգացման նոր փուլի մեկնարկ հանդիսանալով: 2008 և 2020 թթ. տնտեսական ճգնաժամերի համեմատական վերլուծությունը հիմք է հանդիսանում արձանագրելու, որ

---

[1] Համաձայն ՀՀ ՎԿ տվյալների՝ խաղատների և բուքմեյքերական ընկերությունների գործունեությունը ենթաճյուղում 2019-ին ունեցել է 22% մասնաբաժին, 2020-ին՝ 19.5%, 2021-ին արդեն՝ 36.9%: Ըստ Վիճակագրական կոմիտեի՝ այս տարվա առաջին ինն ամիսներին (2021 թ. հունվար-հունիս) Հայաստանում խաղատների հասույթը կազմել է 2.5 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կրճատվել է 78.1%-ով: Իսկ վիճակախաղերի՝ բուքմեյքերական խաղերի ծավալը կազմել է 161 մլրդ ՀՀ դրամ՝ նվազելով 37.6%-ով:

[2] Ծառայությունների ծավալը 2021-ի հունվար-հոկտեմբերի դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, աճել է 6.4%-ով, որի մեջ մշակույթ, զվարճություններ և հանգիստ ենթաոլորտը 12.6%-ով է աճել, ինչը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, նվազել է 35.5%-ով: Տեղեկատվություն և կապ ենթաոլորտը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, աճել է 11.5%-ով, կացության և հանրային սննդի ենթաոլորտն աճել է 65.8%-ով:

[3] Տե՛ս ՀՀ ԿԲ, ՀՀ վճարային հաշվեկշիռ, 2020:

[4] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:

դրանք տնտեսության մեջ բացասական զգալի հետք են թողել՝ փոխելով ոլորտային աճի շարժընթացը:

Հատկանշական է, որ եթե 2009 թ. տնտեսական ճգնաժամը ավարտված է, իսկ պատկերը՝ պարզ, 2020 թ. գլոբալ առողջապահական ճգնաժամը դեռևս ընթանում է՝ ուղեկցվելով վարակի նոր ալիքներով, ինչը խոչընդոտում է վերջնական պատկերի ձևավորմանը: Այնուամենայնիվ, առկա տվյալներով վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խաթարված են կայունության հիմնական հենասյուները, ինչն առնվազն կարճաժամկետում արգելք է հանդիսանալու տնտեսության զարգացման համար: Առավել հանգամանորեն՝ բացասական է պատկերը *անվտանգության, քաղաքական կայունության և հարկաբյուջետային քաղաքականության* հենասյուներում, որոնցից դրական հավասարակշռությամբ առանձնանում է *դրամավարկային քաղաքականությունը*, ինչն էլ գտնվում է ԿԲ վերահսկողության ներքո:

Զարգացման պրոգրեսիվ պատկերը վերականգնելու համար առաջարկում ենք վերանայել տնտեսության ճյուղային կառուցվածքը, բարելավել ծախսային ուղղությունները, պետական պարտքը ներգրավել տնտեսության մեջ լրացուցիչ արդյունք ստեղծելու համար, բարելավել ներդրումային միջավայրը, վերահսկողություն իրականացնել՝ ուղղված փոքր և միջին բիզնեսի գործունեությանը, քանի որ ճգնաժամից ինքնուրույն դուրս գալու ձգտումները բիզնեսի սեփականատերերին դրդում են ստվերի խորացմանը: Առաջարկում ենք նաև պետական գնումներն իրականացնել՝ ի հաշիվ տեղական արտադրանքի՝ այսկերպ խրախուսելով արտադրությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամփոփ հաշվետվություն «ՀՀ Կառավարության հակաճգնաժամային միջոցառումների մասին», 2009:
3. Беляев А. А., Коротков Э. М., Антикризисное управление, 2009, 312 стр.
4. Богданов А. А., Тектология. всеобщая организационная наука, 1910, 712 стр.
5. Джон Э. Вон, Кризис, 2009, 352 стр.
7. Forecasting Economic Crises An Empirical Approach https://www.econ.uni-muenchen.de/download/lehre-at-lmu/forecasting.pdf
8. Հայաստանում տնտեսական ճգնաժամերի համեմատական վերլուծությունը, https://www.luys.am/img/artpic/small/03f3e7f1102f1e44d1ad%D5%8F%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B3%D5%A3%D5%B6%D5%A1%D5%AA%D5%A1%D5%B4.pdf
9. https://www. bsg.ox.ac.uk/research/research-projects/ covid-19-government-resp onse-tracker
10. file:///C:/Users/HP/Downloads/%D4%B9%D5%A5%D5%B4%D5%A1%206.pdf
11. https://www.armstat.am/am/?nid=82&id=1191
12. https://www.cba.am/am/SitePages/mp2009_report.aspx
13. https://www.gov.am/am/covid19./
14. https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2020/06/24/WEOUpdateJune2020

Հավելված 1

ՀՀ ՀՖՃ փոխանցման ուղիները

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ

Փոխանցման ուղիներ	***Տնտեսության հիմնական սուբյեկտներ***
Օտարերկրյա ուղղակի ներդրումներ	Կառավարություն
Ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտներ	Տնային տնտեսություններ
Զբոսաշրջություն	Մասնավոր ընկերություններ
Արտահանվող ապրանքների 4 խումբ	
Գործոնային եկամուտ և ընթացիկ կառավարման տրանսֆերտներ	

Աղյուսակ 1

ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափը (տոկոսային կետ)[1]

	2008	*2009*
Ներքին արդյունք (համախառն շուկայական գներով)	6.9	-14.2
Գյուղատնտեսություն, որսորդություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն	0.6	0.0
Արդյունաբերություն՝ ներառյալ էներգետիկա	0.3	-1.1
Շինարարություն	2.7	-10.7
Առևտուր, տրանսպորտ և կապ, հյուրանոցներ և ռեստորաններ	1.5	-0.5
Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ	0.8	0.1
Այլ գործունեություն ծառայությունների մատուցման բնագավառում	-0.6	0.4
ՖՄԱՉԾ	-0.1	0.0
Արտադրանքի զուտ հարկեր	1.7	-2.4

Աղյուսակ 1-ից և 2-ից ակնհայտ է, որ նախաճգնաժամային տարիներին ՀՆԱ-ի աճն ապահովել են տնտեսության տարբեր ճյուղեր: Զուգահեռ նաև փոփոխություն ենք նկատում հետճգնաժամային տարիների ճյուղային նպաստումների կառուցվածքում, ինչի մասին խոսվել է վերոբերյալ շարադրանքում:

Աղյուսակ 2

ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափը (տոկոսային կետ)[2]

	2019	*2020*
Ներքին արդյունք (համախառն շուկայական գներով)	7.63	-7.40
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաները)	0.76	-1.14
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	6.87	-6.26
ՖՄԱՉԾ	-0.06	-0.31
Գյուղատնտեսություն, որսորդություն, անտառային տնտեսություն	-0.81	-0.47
Արդյունաբերություն՝ ներառյալ էներգետիկա	2.17	-0.31
Շինարարություն	0.43	-0.43
Առևտուր և գործունեություններ ծառայությունների մատուցման բնագավառում	5.14	-4.74

[1] Աղբյուր՝ ՀՀ ՎԿ, հրապարակումներ՝ ըստ տարիների:
[2] Աղբյուր՝ նույնը:

НАИРА САРГСЯН
Менеджмент, бакалавриат, 3 курс

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ЭКОНОМИЧЕСКОГО КРИЗИСА В АРМЕНИИ ЗА 2009 И 2020 ГГ.

Ключевые слова: *кризис, экономический рост, ВВП, отрасли экономики.*

Экономические кризисы являются неотъемлемой частью экономики каждой страны, степень их воздействия во многом зависит от уровня развития страны-переносчика кризиса и путей его передачи.

В Республике Армения тоже были экономические кризисы, отличающиеся своим характером и глубиной. Таким образом, ниже будет представлен сравнительный анализ экономических кризисов 2009 и 2020 гг.

NAIRA SARGSYAN
Management, Bachelor's Degree, 3rd Year

COMPARATIVE ANALYSIS OF THE ECONOMIC CRISIS OF 2009 AND 2020 IN ARMENIA

Keywords: *crisis, economic growth, GDP, sectors of the economy.*

Economic crisis is an inseparable part of every country's economy. The extent of its impact mainly depends on the level of development of the country where the crisis exists and ways of its transmission.

The Republic of Armenia has had economic crises, too, which differ in their nature and depth. The article presents a comparative analysis of the 2009 and 2020 economic crises in Armenia.

ՍԻԼՎԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Տնտեսագիտություն,
բակալավրիատ, 3-րդ կուրս

ԲԼՈԿՉԵՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *բլոկչեյն, կրիպտոարժույթներ, ապակենտրոնացված տեխնոլոգիա, բիթքոյն*

Ժամանակակից աշխարհում ավելի ու ավելի է կարևորվում տեխնոլոգիական գործոնի դերը տնտեսության և հասարակական զարգացման բոլոր ուղղություններում: Հաշվի առնելով սույն հանգամանքը՝ կատարվել է բլոկչեյն տեխնոլոգիայի բազմակողմանի հետազոտություն, ուսումնասիրվել են վերջինիս դերն ու կիրառման հնարավորությունները տարբեր ոլորտներում, անդրադարձ է կատարվել կրիպտոհամա-